ՍՓԻՒՌՔԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԷՆ ԵՒ ՍԻՐԻԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ

Արման Ս. Եղիազարեան
armyegh@yahoo.com

ՄՈՒՏՔ

Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէն (այսուհետեւ՝ Կոմիտէ) ստեղծուել է Հայկական ՍՍՌ մինիստրների սովետի 26 Մայիս 1964ի թիւ 226 որոշմամբ: Ըստ այդ որոշման (բնագիրը՝ ռուսերէն)՝ Կոմիտէն կոչուելու էր «Արտասահմանեան Հայրենակիցների Հետ Մշակութային Կապերի Հայկական Կոմիտէ»[1], չնայած Յունիսի 25ին տեղի ունեցած հիմնադիր ժողովում[2] Մարտիրոս Սարեանի առաջարկութեամբ ստացաւ «Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէ» անուանումը[3]: Կոմիտէի գերբը (Արարատ Լեռան ֆոնին թռչող կռունկ), որը չնչին փոփոխութիւններով այժմ օգտագործում է նաեւ ՀՀ Սփիւռքի Նախարարութիւնը որպէս Հայաստան-Սփիւռք գործակցութեան խորհրդանշան-վահանակ, գծագրել է Սարեանը:

ՀՍՍՀ մինիստրների խորհրդի յաջորդ՝ թիւ 227 որոշմամբ Կոմիտէի նախագահ է նշանակւում Վարդգէս Եղիշէի Համազասպեանը[4]: Կոմիտէի կառոյցում գործում էին տարածաշրջանների հայ համայնքների հետ կապերի բաժիններ, որոնցից մէկն էլ «Ասիայի ու Աֆրիկայի Հայկական Գաղթօճախների Հետ Կապերի Բաժին»ն էր, որը կոչւում էր նաեւ «Արեւելեան Երկրների Բաժին»: Սիրիահայութեան հետ աշխատանքներն իրականացւում էին այդ բաժնի կողմից: Կոմիտէն համարւում էր ԽՍՀՄի՝ արտասահմանի հայրենակիցների հետ մշակութային կապերի սովետական ընկերութեան՝ «Ռոդինա»ի (հայրենիք) անդամ-կազմակերպութիւն[5]:

Կոմիտէի կանոնադրութեան մէջ, որը հաստատուել էր հիմնադիր համագումարում, շարադրուած էին Կոմիտէի հետեւեալ նպատակներն ու խնդիրները.

1. Հաստատել եւ զարգացնել կապերը սփիւռքահայ գաղթօճախների հետ.
2. Գաղթօճախների հայութեանը ծանօթացնել հայրենիքի կեանքի, ձեռքբերումների, գիտութեան ու մշակոյթի հետ.
3. Գաղթօճախների հայութեան մէջ սերմանել հայրենասիրութիւն.
4. ՀՍՍՀի աշխատաւորներին ծանօթացնել գաղթօճախների, առաջադիմական կազմակերպութիւնների, ձուլման դէմ պայքարի եւ Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնների զարգացմանն ուղղուած աշխատանքների հետ:

Վերոյիշեալ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ էր.-

1. Հաստատել կապեր առաջադիմական, դեմոկրատական ու հայրենասիրական կազմակերպութիւնների, բարեգործական ու մշակութային միութիւնների հետ.
2. Գաղթօճախներում տարածել հայրենիքի թերթերը.
3. Օգնել գաղթօճախներին.
4. Գաղթօճախների հրաւէրով մեկնել արտասահման, ուղարկել տարբեր խմբեր.
5. Հայրենիք հրաւիրել պատուիրակութիւններ գաղթօճախներից.
6. Աջակցել սփիւռքահայ զբօսաշրջիկներին.
7. Կազմակերպել սփիւռքահայ նկարիչների ցուցահանդէսներ.
8. Կազմակերպել գրական երեկոներ.
9. Հրատարակել սփիւռքահայ գրողների ստեղծագործութիւնները[6]:

Կարեւոր է Համազասպեանի վկայութիւնը Կոմիտէի ձեւաւորման ու նպատակների մասին. «*Հայրենիք-սփիւռք կապերի ընդլայնման, զարգացման նոր, համարձակ քայլ էր 1964թ. Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի ստեղծումը, որի հիմնադիրներ դարձան Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգէն Առաջինը, Մարտիրոս Սարեանը, Վիկտոր Համբարձումեանը, Ստեփան Զօրեանը, Հրաչեայ Քոչարը, Նայիրի Զարեանը, Պարոյր Սեւակը, Սիլվա Կապուտիկեանը, Վարազդատ Յարութիւնեանը, Տիգրան Պետրոսեանը, Արա Սարգսեանը, Մեսրոպեայ Սիմոնեանը, Երուանդ Քոչարը, Յովհաննէս Զարդարեանը, Մօրուս Հասրաթեանը, Պատրիկ Սելեանը եւ ես՝ նուաստս, ողջ Հայաստանի մտաւորականութիւնն ու աշխատաւորութիւնը: Բոլորին սրտամօտ կազմակերպութիւն դարձաւ կոմիտէն, քանզի նրա ղեկավարութեանը իրաւունք էր վերապահուած կուսակցութեան ու պետութեան որոշ օրգանների հսկողութեամբ «ազատ» կապերի մէջ մտնել սփիւռքահայ կազմակերպութիւնների հետ, հաշուի առնելով նաեւ քաղաքական հանգամանքները*»[7]:

ԿՈՄԻՏԷԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՍԻՐԻԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄԵԱԿՈՒՄ (1964-69)

Կոմիտէն իր գործունէութիւնը սկսեց հայ համայնքների ուսումնասիրութեամբ: Այդ հարցում բացառութիւն չէր նաեւ Սիրիայի հայ համայնքը: Մասնաւորապէս, արխիւային նիւթերում պահպանուել է 24 Յուլիս 1964ով թուագրուած՝ Հալէպի հայ համայնքի մասին տեղեկանք, որը մի կողմից խիստ արժէքաւոր վաւերագիր է հալէպահայութեան պատմութեան համար, իսկ միւս կողմից՝ հնարաւորութիւն է տալիս յստակ պատկերացում կազմելու Կոմիտէի գործունէութեան սկզբունքների մասին[8]:

Ըստ տեղեկանքի՝ մինչեւ 1959 Հալէպի հայութեան թիւը հասնում էր 70,000ի, բայց վերջին տարիներին քաղաքական անկայունութեան եւ տնտեսական անկման հետեւանքով բազմաթիւ հայեր հեռացել են Լիբանան, Միացեալ Նահանգներ եւ Լատինական Ամերիկա: Քաղաքի

հայութեան թիւը 1964ին 55,000 էր: Հալէպի շատ հայեր, որոնց թւում՝ նաեւ մեծահարուստներ, դիմել են ՀՍՀՄ գլխաւոր հիւպատոսութիւն՝ հայրենադարձուելու խնդրանքով: Հայրենադարձուելու ցանկութիւնը բխում էր նաեւ այն իրողութիւնից, որ 1961ին ԽՍՀՄ իշխանութիւնները որոշում էին ընդունել սփիւռքահայերի նոր ներգաղթ կազմակերպելու վերաբերեալ[9]:

Տեղեկանքում մանրամասն ներկայացուած են հայութեան զբաղուածութեան ոլորտները (արհեստաւորներ, գործարարներ, պետական պաշտօնեաներ եւն.): Քաղաքի հայերի 85%ը բարեկեցիկ կեանք ունէր, նրանց կեանքի որակն աւելի բարձր էր, քան տեղական բնակչութեան մնացեալ հատուածինը: Սիրիայի իշխող Բաաս Կուսակցութիւնը դիմել էր Ռամկավար Ազատական (ՌԱԿ) եւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան (ՍԴՀԿ) կուսակցութիւններին՝ համագործակցութեան համար, սակայն վերջիններս հրաժարուել էին՝ ասելով, որ իրենց կառոյցները Սիրիայում չեն գործում, ցրուած են, ուստի՝ նման համագործակցութեան համար չունեն կազմակերպական յենք: Ինչ վերաբերում է Հայ Յեղափոխական Դաշնակցութեանը (ՀՅԴ), ապա, ըստ տեղեկանքը կազմողների՝ այն չունէր նախկին կշիռը պետական իշխանութեան մօտ:

Տեղեկանքում նշւում էր, որ սիրիական իշխանութիւնները սահմանափակել են հայոց լեզուի եւ գրականութեան ուսուցումը հայկական դպրոցներում:

Ըստ տեղեկանքի՝ ընդհանուր առմամբ, քաղաքի հայութեան 35-40,000ը լուսաւորչական էին, 6-8,000ը՝ կաթոլիկ, իսկ 6,000ը՝ բողոքական:

Տեղեկանքի հեղինակները յատկապէս մանրամասն են անդրադարձել Հալէպի հայութեան հասարակական-քաղաքական կեանքին: Համայնքի քաղաքական հոսանքները Կոմիտէն բաժանում էր երեք մասի.-

1. Առաջադիմական (կոմունիստներ, հնչակեաններ, ռամկավարներ).
2. Ռէակցիոն (դաշնակցականներ).
3. Չէզոք (որոնք, ըստ տեղեկանքի՝ առաւել հակուած են դէպի առաջադիմական ուղղութիւնը):

Ըստ տեղեկանքի՝ Հալէպում ՌԱԿի անդամների թիւը հասնում էր 100ի, բայց նրանց ազդեցութեան ներքոյ էր գտնւում Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ) տեղական մասնաճիւղը, որի անդամները ողջ Սիրիայում մօտ 1000ն էին, իսկ միայն Հալէպում՝ 750ը: ՍԴՀԿի անդամների թիւը գրեթէ նոյնքան էր (շուրջ 100), իսկ ՀՅԴի անդամների թիւն անցնում էր 1000ը:

Համայնքում գործում են նաեւ մի շարք հայրենակցական միութիւններ, ինչպէս՝ Մարաշի, Տարօնցիների («Արծիւ»), նաեւ՝ մշակութային կազմակերպութիւններ, վարժարաններ, դպրոցներ եւն.[10]:

Ցաւօք, սիրիահայութեան միւս հատուածների վերաբերեալ նման տեղեկանքներ մեզ գտնել չյաջողուեց:

Նման մանրակրկիտ տեղեկանքների հիման վրայ էլ Կոմիտէն սկսեց իր աշխատանքները:

Առաջին եւ կարեւոր խնդիրը համայնքի կազմակերպութիւնների եւ անհատ գործիչների հետ կապերի հաստատումն էր: 1964ին Կոմիտէն Արտասահմանեան Երկրների Հետ Մշակութային Կապի Հայկական Ընկերութեան (ԱՕԿՍ)[11] Սփիւռքի բաժնից ստացաւ նրա թղթածրարները: Այդ ընկերութիւնը Սփիւռքում կապ էր ունեցել ընդամէնը 631 կազմակերպութեան ու անհատի հետ[12], որն անբաւարար էր: Արդէն 1964ի վերջին վերաբերող արխիւային նիւթերից երեւում է, որ Կոմիտէն նամակագրական լայն կապեր է հաստատել սիրիահայութեան հետ[13]: Դրան նպաստում էր նաեւ այն, որ Կոմիտէի գործունէութիւնը լայն արձագանգ էր գտել սիրիահայութեան շրջանում, որտեղից բազմաթիւ շնորհաւորական նամակներ են առաքուել Կոմիտէի նախագահ Համազասպեանի անունով: Աւելի զուսպ էին սիրիահայ կազմակերպութիւնները, որոնցից սկզբում միայն ՀԲԸՄի Դամասկոսի մասնաճիւղն էր, որ շնորհաւորական նամակ էր յղել՝ նշելով, որ իրենք եւս Դամասկոսում «մշակութային շրջանակ» են ստեղծել՝ ՀՍՍՀի հետ յարաբերուելու համար: Ուշագրաւ էր ամփոփումը՝ «*սպասելով Ձեզմէ գալիք առաջարկութիւններուն եւ թելադրութիւններուն*»: Շուտով նման նամակներ ստացուեցին նաեւ Հալէպի արիական-սկաուտական կազմակերպութիւններից (ՀՄՄ, ՀԵԸ, Վասպուրական), Մարաշի Հայրենակցական Միութիւնից եւ մի շարք երիտասարդական կազմակերպութիւններից[14]:

Կոմիտէի գլխաւոր գործընկեր-կազմակերպութիւններից մէկը դարձաւ ՀԲԸՄի Սիրիայի մասնաճիւղը: 1965ին աջակցութեան խնդրանքով Կոմիտէին դիմեց ՀԲԸՄ Դամասկոսի «Մշակութային Շրջանակ»ը: Նամակում ներկայացուած էին շրջանակի հիմնական առաջադրանքները՝ մշակութային ձեռնարկների իրականացում, գրադարանների ստեղծում, թատերախմբի ձեւաւորում, պատմական եւ հնագիտական արշաւների կազմակերպում, հայրենիքի հետ մշակութային կապերի հաստատում եւն.: Շրջանակի ներկայացուցիչները խնդրում էին օգնել՝ առաջադրանքները իրականացնելու հարցում[15]:

Աւելին՝ Սիրիայի մի շարք հայկական վարժարաններում, որոնք գործում էին ՀԲԸՄի հովանաւորութեամբ, 1965ի երկրորդ կէսից նախատեսւում էր կիրառել ՀՍՍՀում լոյս տեսած դասագրքերը[16]:

Պէտք է նշել, որ Կոմիտէի հիմնադրումը համընկաւ 1965ի խորհրդահայ «զարթօնք»ի հետ, որը զգալիօրէն նպաստեց Կոմիտէի աշխատանքների ընդլայնմանը: Սիրիահայ տարբեր շրջանակներ հրաւիրուեցին այցելելու ՀՍՍՀ՝ Ապրիլի 24ի առիթով: Այդ տարի հայրենիք այցելեցին եւ պիոնէրական ճամբարներում իրենց հանգիստն անցկացրեցին նաեւ սիրիահայ 13 պատանիներ[17]:

Կոմիտէի գործունէութեան մէջ 1965 թուականը բուռն տարի էր: Բացի այն, որ դեռեւս ընթանում էր կապերի հաստատման գործընթացը, Կոմիտէն բազմաթիւ նամակներով ստանում էր օգնութեան խնդրանքներ: Կոմիտէին էին դիմել Քեսապի հայ կաթողիկէ դպրոցը՝ երգարաններ եւ դասագրքեր ուղարկելու խնդրանքով, Լաթաքիայի Ազգային Երկսեռ Վարժարանը՝ գրամեքենայ ուղարկելու խնդրանքով (որը, ի դէպ, մերժուեց), Հալէպի նորաբաց Մխիթարեան Վարժարանը՝ դասագրքեր ու գեղարուեստական գրականութիւն ուղարկելու խնդրանքով[18] եւն.:

Կոմիտէի աշխատանքներում կարեւոր տեղ էր զբաղեցնում փոխայցելութիւնների կազմակերպումը: Արդէն 1966ին, Կոմիտէի միջոցով Սիրիայի հայ համայնք այցելեցին մեծավաստակ գիտնականներ Լեւոն Խաչիկեանն ու Սէն Արեւշատեանը: Նրանց ընդունման եւ դիմաւորման հարցերով զբաղուել էր հայ առաքելական եկեղեցու Դամասկոսի Թեմի առաջնորդ Հոգշն. Շաւարշ Եպս. Գոյումճեանը, որին էլ կարճ ժամանակ անց Կոմիտէն շնորհակալական նամակ յղեց՝ գիտնականներին ընդունելու եւ օգնելու համար: Առաջնորդի հասցէով այդ տարի ուղարկուեցին նաեւ զգալի քանակով դասագրքեր եւ գեղարուեստական գրականութիւն[19]:

Նոյն թուականին ՀՍՍՀ այցելեցին Հայ Աւետարանական Եկեղեցու ներկայացուցիչները[20]:

1966ին ուրուագծուեցին Կոմիտէի աշխատանքի հետեւեալ ուղղութիւնները.-

1. ՀՍՍՀ ձեռքբերումների շուրջ քարոզչութեան իրականացում.
2. Նոր կապերի հաստատում.
3. Փոխայցելութիւնների կազմակերպում.
4. Կարիքներին ծանօթանալու եւ, ընդհանրապէս, ծանօթութեան նպատակով՝ օգնութեան համար դիմած կազմակերպութիւններին եւ անձանց լրացման համար հարցաթերթիկների առաքում.
5. Կազմակերպութիւններին գրքերի (այբբէնարաններ, զանազան դասագրքեր, գեղարուեստական գրականութիւն) առաքում.
6. Սփիւռքահայութեան շրջանում ՀՍՍՀ թերթերի եւ ամսագրերի բաժանորդագրութեան կազմակերպում.
7. Բնագիտութեան եւ տարրաբանութեան աշխատանոցներին օգնութիւն[21]:

Կային, սակայն, Կոմիտէի աշխատանքներին խոչընդոտող մի շարք իրողութիւններ ՀՍՍՀում: Պէտք է յատկապէս նշել, որ Կոմիտէն իրաւասու չէր համարւում Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնների զարգացման համար յենքային նշանակութիւն ունեցող այնպիսի մի կարեւոր ոլորտում, ինչպիսին սփիւռքահայ երիտասարդների ուսման կազմակերպումն ու կրթական խնդիրների կարգաւորումն էր ՀՍՍՀում: Համապատասխան խնդրանքներով նամակներին՝ Կոմիտէն պատասխանում էր նամակագիրներին ուղղորդելով ՀՍՍՀ Բարձրագոյն եւ Միջնակարգ Կրթութեան Մի-

նիստրութիւն: Իդէպ, 1960ականների երկրորդ կէսին հաստատուած նոր կարգի համաձայն սահմանւում էր, որ ՀՍՍՀում ուսանել ցանկացող օտարերկրացին պէտք է դիմի բնակութեան պետութիւնում ԽՍՀՄ դեսպանութիւն, որի միջոցով նրա փաստաթղթերը պէտք է ուղարկուեն ՀՍՍՀ Արտաքին Գործերի Մինիստրութիւն՝ քննարկման նպատակով[22]:

1966ին Կոմիտէին են դիմում ՍԴՀԿ Սիրիայի ներկայացուցիչներ: Նրանք խնդրում էին իրենց ուղարկել դաշնամուր, թերթ հրատարակելու համար տպագրական մեքենայ եւ այլ պարագաներ[23]: Այս նամակը կից գրութեամբ նախագահին փոխանցող Կոմիտէի կապերի բաժնի վարիչ Գրիգոր Բեքմէզեանը գրում էր, որ համայնքն առաւել համախմբելու համար հարկ է աջակցել «առաջադիմական» ՍԴՀԿին՝ նոր թերթ հրատարակելու հարցում[24]:

Կոմիտէի գործունէութիւնն այնքան էր ոգեւորել սիրիահայ որոշ շրջանակների, որ Տերիք գիւղաքաղաքի շուրջ 60 հայեր 26 Նոյեմբեր 1966 թուակիր նամակով դիմեցին Կոմիտէին (նամակի հասցէ՝ "Ներգաղթի Խորհուրդ")՝ հայրենադարձուելու խնդրանքով[25]:

1966ին Կոմիտէն աջակցում էր նաեւ սիրիահայութեան ներկայացուցիչների՝ ՀՍՍՀ այցելութիւններին: Շատեր, այցելութիւնից յետոյ շնորհակալական նամակներով գրում էին ՀՍՍՀում ստացած իրենց ջերմ տպաւորութիւնների վերաբերեալ[26]:

Սիրիահայ որոշ շրջանակներ այդ ժամանակ Կոմիտէի միջոցով փորձում էին լուծել համայնքի առաջ ծառացած կարեւոր խնդիրներ: 1967ին Կոմիտէն խնդրագրեր ստացաւ Սիրիայի հայկական կազմակերպութիւններից (ՀԲԸՄի Սիրիայի Կրթական Յանձնախումբ, Հալէպահայ Ուսուցչաց Միութիւն)՝ ՀՍՍՀում կազմակերպելու սիրիահայ որոշ ուսուցիչների հեռակայ ուսուցումը: Խնդիրն այն էր, որ Սիրիայում գործող նոր օրէնքի համապատասխան՝ երկրի հայկական վարժարանների ուսուցիչները պէտք է ունենային Սիրիայի Կրթութեան Նախարարութեան համար ընդունելի վկայականներ, մինչդեռ հայ ուսուցիչների մի մասն ունէր միայն Մելգոնեան Կրթական Հաստատութեան կամ Երուսաղէմի Պատրիարքութեան ու Անթիլիասի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դպրեվանքերի վկայականներ, որոնք ընդունելի չէին համարւում[27]:

Կոմիտէի պատասխան նամակը յուսադրական չէր: Կոմիտէն չէր կարողացել խնդիրը լուծել, եւ միակ հնարաւորութիւնը ՀՍՍՀում 6 ամսից մինչեւ 1 տարի ժամկէտով ըստ մասնագիտութեան կատարելագործուելն էր: «*Եթէ գտնում էք, որ Ձեր թեկնածուները մէկ տարում կարող են յանձնել բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում անհրաժեշտ բոլոր առարկաները եւ պետական քննութիւնները, ապա կարող էք այդ խնդրով դիմել տեղի սովետական հիւպատոսին*»՝ գրուած էր Կոմիտէի պատասխան նամակում[28]:

1968ին Կոմիտէն սիրիահայ կազմակերպութիւններին է առաքել իր պարբերականները՝ *Հայրենիքի Ձայն* շաբաթաթերթն ու *Սովետական Հայաստան* ամսագիրը:

Միեւնոյն ժամանակ, սիրիահայ շրջանակները Կոմիտէի առաջ բարձրացրել են արեւմտահայերէնով մանկապատանեկան գրականութիւն հրատարակելու հարցը, որին ի պատասխան Կոմիտէի ներկայացուցիչը գրում էր, որ իրենց եւս յուզում է այդ խնդիրը[29]:

Արխիւում առկայ է Կոմիտէի 1969ի գործունէութեան հաշուետուութիւնը[30], որը հնարաւորութիւն է տալիս ամբողջական պատկերացում կազմելու իրականացուած աշխատանքների վերաբերեալ: Այնտեղ նշւում է, որ Կոմիտէի գործունէութիւնը ունի յատուկ նպատակ՝ զարկ տալ գաղթօճախների հետ կապերի զարգացմանը՝ նպատակ ունենալով այդ կապերն օգտագործել միջազգային կայսերապաշտութեան ազդեցութեան ոլորտի երկրներում ապրող հայ ազգաբնակչութեանը հասցնելու ճշմարտութիւնը Խորհրդային Միութեան եւ, մասնաւորապէս, ՀՍՍՀի մասին[31]:

Ըստ այդ հաշուետուութեան՝

1. Կոմիտէն զարգացրել է կապերն «առաջադիմական» ու «հայրենասիրական» կազմակերպութիւնների եւ անհատների հետ.
2. Եթէ 1969 Յունուարին Կոմիտէն կապ ունէր 3696 հայի ու հայկական կազմակերպութեան հետ, ապա 1970 Յունուարի 1ի դրութեամբ՝ արդէն 892 կազմակերպութեան եւ 3670 անհատների հետ, ունենալով ընդհանուր առմամբ 4562 հասցէ.
3. Ուղարկուել են թերթ, ամսագիր, գեղարուեստական, քաղաքական, երաժշտական գրականութիւն, դասագրքեր, ձայնապնակներ, ձայնագրութիւններ, ցուցահանդէսի համար լուսանկարներ.
4. Իրականացուել է ուսուցիչների ամէնամեայ վերապատրաստում ՀՍՍՀում (Սիրիայից ուսուցիչներ այդ տարում չեն եղել).
5. Կազմակերպուել է հայրենակցական միութիւնների ներկայացուցիչների այցելութիւն ՀՍՍՀ (իդէպ, Մարաշի Հայրենակցական Միութիւնը ներկայացուած է եղել մի շարք մասնաճիւղերով, բացի Հալէպի մասնաճիւղի ներկայացուցիչներից)[32].
6. Գաղթօճախներին տրամադրուել է նիւթական օգնութիւն.
7. Ընդունուել են բազմաթիւ սփիւռքահայ հիւրեր[33]:

Յաւելենք նաեւ, որ 1970ի դրութեամբ ՀՍՍՀ բուհերի եւ տեխնիկումների 180 շրջանաւարտներից (157 բուհական եւ 23 տեխնիկումի) 62ը եղել են սիրիահայեր: Այդ ցուցանիշն առաջինն է սփիւռքահայ համայնքների մէջ[34]: Սիրիահայ շրջանաւարտների թիւն առաջինն է նաեւ 1960-80ականներին ՀՍՍՀի բարձրագոյն եւ միջնակարգ մասնագիտական հաստատութիւններն աւարտածների թուով (324)[35]:

Եթէ ամփոփենք Կոմիտէի գործունէութեան առաջին ինգամեակը՝ կարող ենք նշել, որ այն կատարել էր զգալի աշխատանքներ սիրիահայ կազ-

մակերպութիւնների եւ անհատների շրջանում: Ընդհանուր առմամբ, սակայն, այդ հնգամեակը պէտք է դիտարկել՝ հիմնականում որպէս կապերի հաստատման ու ամրապնդման առաջին շրջան: Այդ ժամանակաշրջանի կարեւորագոյն ձեռքբերումը, թերեւս, այն մեծ ոգեւորութիւնն էր, որ առկայ էր ինչպէս Սփիւռքում, այնպէս էլ հայրենիքում[36]:

ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆՈՐ ՓՈՒԼԸ ԿՈՄԻՏԷԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄԵԱԿՈՒՄ (1970-75)

Կոմիտէն 1970ին ներկայացրել է հալէպահայութեան վերաբերեալ հերթական տեղեկանքը: Իդէպ, կարեւոր է այն, որ մասնաւորապէս Դամասկոսի հայկական համայնքի մասին նման տեղեկանք չկայ: 1964ի եւ 1970ի տեղեկանքների համադրութիւնը հնարաւորութիւն է տալիս յայտնաբերելու Կոմիտէի եւ հալէպահայ կազմակերպութիւնների ու անհատների հետ յարաբերութիւնների որոշ խնդիրներ:

Ըստ 1970ի տեղեկանքի՝

1. Հալէպահայութեան թիւը 35-40,000 է (հմմտ. 1964ի՝ 55,000).
2. 1964-65ին սիրիահայերն աւելի շատ մեկնել են արեւմուտքի երկրներ, քան հայրենադարձուել ՀՍՍՀ.
3. Սիրիահայութեան շրջանում հայրենադարձութիւն կազմակերպելը համարւում է աննպատակայարմար, քանի որ Սիրիայի իշխանութիւնները խոչընդոտում էին դրան, իսկ ՀՅԴն՝ հակաքարոզում, ուստի՝ արդիւնքները բաւարար լինել չեն կարող.
4. Չնայած դրան, հայրենադարձուել ցանկացողների թիւն աճել է՝ Սիրիայի իշխանութիւնների կողմից դպրոցներում հայոց լեզու եւ գրականութիւն դասաւանդելու վրայ դրած արգելքից յետոյ.
5. Համայնքը բաժանուած է 2ի՝ «առաջադիմական» եւ «ռէակցիոն».
6. Տեղի հայկական համայնքի հասարակական կեանքը կազմակերպւում է պետութեան կողմից պաշտօնապէս ընդունուած Ազգային Գաւառական Ժողովի կողմից, որի անդամների մեծ մասը դաշնակցականներ կամ նրանց համակիրներն են (Ժողովի 35 անդամներից միայն 5ն է «առաջադիմական»).
7. Այդպիսով՝ ՀՅԴն «խլել» է համայնքային իշխանութիւնը.
8. Համայնքում վիճակը խիստ բարդ է.
9. 1966ին ստեղծուել է «առաջադիմական» հայերի՝ «Սիրիայի Արաբական Հանրապետութեան Առաջադիմական Ճակատ»ը.
10. Կոմիտէն կարծում է, որ հարկ է օգնել «Առաջադիմական Ճակատ»ին՝ ԽՍՀՄ գլխաւոր հիւպատոսութեան միջոցով[37]:

Եթէ համեմատենք երկու տեղեկանքները, կարող ենք արձանագրել, որ.-

1. Պակասել էր համայնքի հայութեան քանակը.

2. Համայնքում տիրող իրավիճակից դրդուած հայրենադարձութեան կազմակերպումը համարւում էր ոչ-նպատակայարմար, առաւել եւս, որ Սիրիայից հեռացող հայերի մեծ մասը «նախընտրում» էր մեկնել Արեւմուտքի երկրներ եւ ոչ թէ հայրենադարձուել ՀՍՍՀ.
3. Կոմիտէն արձանագրում էր «ռէակցիոն» հոսանքի յաղթանակը համայնքում, որի արդիւնքում ՀՅԴն «խլել» է համայնքային իշխանութիւնը,
4. Համայնքում այլեւս չկային «չէզոքներ». դրանք արդէն «ռէակցիոն» հոսանքի կողմնակիցներ էին, չնայած նախկինում յոյս կար, որ նրանք կարող են բռնել «առաջադիմական» հոսանքի կողմը.
5. Կոմիտէն հասկանում էր, որ վտանգի տակ է յայտնուել իր գործունէութեան արդիւնաւէտութիւնը սիրիահայ համայնքում, ուստի՝ առաջարկում է օգնութիւն տրամադրել «առաջադիմական ճակատին»:

Թէեւ տեղեկանքի հեղինակները սիրիահայերի հայրենադարձութիւնը համարում էին ոչ-նպատակայարմար՝ կասկածելով դրա արդիւնաւէտութեանը, պէտք է նշել, որ 1962-72՝ ներգաղթողների մէջ սիրիահայերը թուով երկրորդն էին՝ զիջելով միայն իրանահայերին: Ներգաղթած սիրիահայերի թիւը կազմում էր 4848 մարդ[38]: Սիրիահայ ներգաղթեալների թիւը նշուած ժամանակաշրջանում էականօրէն զիջում էր 1946-49ի ներգաղթի ժամանակ ՀՍՍՀ տեղափոխուած սիրիահայերի թուին, երբ Սիրիայից ու Լիբանանից համատեղ հայրենիք էր եկել 32,220 հայ[39]: Ուստի՝ ճիշտ էին Կոմիտէի աշխատակիցները՝ կասկածելով նոր ներգաղթի յաջողութեանը՝ սիրիահայութեան շրջանում:

Սակայն, չնայած նշուած մտահոգութիւններին, Կոմիտէի յետագայ աշխատանքային ծրագրերում էական փոփոխութիւններ այդպէս էլ չկատարուեցին:

Կոմիտէի 1970ի աշխատանքային ծրագրով, բացի աւանդական աշխատանքներից (գրականութեան առաքում, ուսուցիչների վերապատրաստում, երիտասարդների հանգստի կազմակերպում պիոնէրական ճամբարներում), մասնաւորապէս, նախատեսւում էր.-

1. Մտաւորականներ եւ արուեստից խմբեր ուղարկել միքանի երկրներ, այդ թւում՝ Սիրիա՝ Վ. Ի. Լենինի ծննդեան 100ամեակի առիթով.
2. 1970ը յայտարարել յոբելեանական տարի՝ ՀՍՍՀի ստեղծման 50ամեակի առիթով.
3. Սիրիա-Լիբանան-Կիպրոս ուղարկել 5 հոգանոց ուսուցչական խումբ՝ հայկական դպրոցներին մեթոդական օգնութիւն ցոյց տալու համար[40]:

Այդ ժամանակ Կոմիտէն աշխուժացրել էր իր աշխատանքները երիտասարդութեան շրջանում: 1971ին տեղի ունեցաւ Սփիւռքի երիտասարդական-առաջադիմական կազմակերպութիւնների ներկայացուցիչների հաւաք-հանդիպումը, որին Սիրիայից մասնակցում էին Հալէպի Ազգային Մշակութային Միութեան եւ ՍԴՀԿ Նոր Սերունդ Մշակութային Միութեան ներկայացուցիչները[41]:

Կոմիտէի 1971ի գործունէութեան հաշուետուութիւնը[42], ընդհանուր առմամբ, շատ աւելի համառօտ ու համեստ էր, քան նախորդները: Առաւել եւս դա նկատելի էր սիրիահայ համայնքի առումով:

Այս տեղատուութիւնը, թերեւս, կապուած էր համայնքում տեղի ունեցած եւ Հալէպի հայութեան վերաբերեալ երկրորդ տեղեկանքում արձանագրուած իրողութիւնների հետ: Միւս կողմից, Կոմիտէի աշխատանքը Սիրիայում իր հիմնական գործընկեր կազմակերպութիւնների հետ չունէր այնպիսի բովանդակութիւն, որ կարողանար բարձրացնել տուեալ կազմակերպութիւնների դերակատարութիւնը հայ համայնքում: Ուստի Կոմիտէի գործունէութիւնն իզօրու չէր փոխելու համայնքի հասարակական-քաղաքական պատկերը, որը նկարագրուած էր 1970ի տեղեկանքում: Դրանից էլ կարելի է բխեցնել, որ Կոմիտէն պէտք է կենտրոնանար հիմնականում մշակութային բնոյթի աշխատանքների ու կապերի վրայ:

Զարմանալի չէ, որ սիրիահայ կազմակերպութիւններն էլ Կոմիտէին սկսում են դիմել հիմնականում այդ բնոյթի հարցերով: 1971ին ՀԲԸՄ-ՀԵԸ Թատերական Յանձնախումբը Կոմիտէից խնդրել է լուսարձակներ բեմի համար, պիէսներ, գրականութիւն, շպարի պիտոյքներ[43], այսինքն՝ այնպիսի պարագաներ, որոնք նպաստում էին Կոմիտէի՝ Սիրիայի գործընկեր-կազմակերպութիւնների մշակութային խմբերի գործունէութեանը, բայց ոչինչ չէին աւելացնում համայնքում նրանց հասարակական-քաղաքական դերակատարութեան աճին:

Բացի այդ, ինչպէս նշուած է արտասահմանում Կոմիտէի ունեցած կապերի քանակի բաժնում, դրանում գերակշռում էին կապերն անհատների հետ, որն էլ երեւում է Կոմիտէի գրագրութեան մէջ[44]: Դա ցոյց է տալիս, որ Սփիւռքում հիմնական դերակատարները՝ համասփիւռքեան եւ համայնքային կազմակերպութիւնների կարեւոր մէկ մասը, ընդհանուր առմամբ, Կոմիտէի կողմից դեռեւս չէին ընկալւում գործընկերոջ դերում, թէեւ ՀՅԴից եւ նրա քոյր ու դուստր կազմակերպութիւններից բացի մնացեալները դիտարկւում էին որպէս «առաջադիմական» հոսանքի ներկայացուցիչներ:

1971-73՝ Կոմիտէի աշխատանքները սիրիահայերի հետ արգելակուեցին արաբ-իսրայէլական պատերազմի պատճառով:

1974ին ՍԴՀԿ Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը (ՆՍՄՄ) ՀՍՍՀից 15-20 հոգիանոց խումբ է հրաւիրում Սիրիա՝ շրջագայութեան եւ այցելութիւնների նպատակով: Միեւնոյն ժամանակ, Նոր Սերունդը Կոմիտէի խողովակով ՀՍՍՀում պատուիրում է հետեւեալ թերթերն ու պարբերականները. *Հայրենիքի Ձայն* շաբաթաթերթ (200 հատ), *Սովետական Հայաստան* ամսագիր (25 հատ), *Սովետական Գրականութիւն* (5 հատ), *Պիոնէր Կանչ* (10 հատ), *Գարուն* (10 հատ), *Պիոնէր* (10 հատ), *Ոգնի* (10 հատ), *Սովետական Մանկավարժ* (5 հատ), *Պատմաբանասիրական Հանդէս* (5 հատ) եւ *Ծիծեռնակ* (10 հատ)[45]: Բերուած թուերը եւ թերթանունները

ցոյց են տալիս, որ Սիրիայի հայութիւնը առանձնապէս ոգեւորուած չէր կոմունիստական գաղափարներ տարածող թերթ-ամսագրերով:

Սիրիահայ մշակութային կազմակերպութիւնները յատկապէս ոգեւորուած էին ՀՍՍՀ արուեստագէտների այցերով: 1974ին սիրիահայ մշակութային կազմակերպութիւնները նամակ են գրում անձամբ Արամ Խաչատրեանին՝ նրան հրաւիրելով Հալէպ՝ տօնելու նրա 70ամեակը[46]: Միւս կողմից, 1974ին ՆՍՄՄՆ Կոմիտէի միջոցով Սիրիա հրաւիրեց Սունդուկեանի Անուան Թատերախումբը[47]: Պատասխան նամակում Կոմիտէն տեղեկացնում էր, որ նման շրջագայութիւն իրականացնելը հնարաւոր չէ[48]: Մերժուեց նաեւ Հալէպի Ազգային Մշակութային Միութեան խնդրանքը՝ գրամեքենայ եւ կինօցուցադրման մեքենայ առաքելու վերաբերեալ[49]:

Կոմիտէին գրում եւ արուեստագէտներ է հրաւիրում Սիրիա նաեւ ՌԱԿ Թեքէեան Մշակութային Միութիւնը[50]:

Կոմիտէի 1975ի հաշուետուութեան սկզբում թէեւ ասւում էր, որ սիրիահայութեան հետ զգալի աշխատանք է իրականացուել, իրականում ողջ հաշուետուութեան մէջ սիրիահայութեան առումով որեւէ միջոցառում յիշատակուած չէ[51]:

Ամփոփելով Կոմիտէի աշխատանքների 1970-75ի աշխատանքները՝ կարող ենք նշել, որ տեսանելի է զգալի տեղատուութիւն, որի հետեւանքով աշխատանքներն աշխուժացնելու փորձ էր կատարուելու յետագայ շրջանում:

ՍԻՐԻԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿՈՄԻՏԷԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ 1976-80 ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Կոմիտէի 1976ի հաշուետուութեան մէջ ասուած էր, որ Մերձաւոր Արեւելքում տիրող անբարենպաստ իրավիճակի պատճառով Սիրիա ՀՍՍՀից որեւէ խումբ չի ուղարկուել, իսկ լիբանահայութեան հետ ընդհանրապէս աշխատանքներ չեն իրականացուել[52]:

Կարեւորութիւն է ներկայացնում Կոմիտէի կողմից կազմուած 1976ի տեղեկանքը գաղթօճախների մասին, քանի որ հենց այդ տեղեկանքով է, որ Կոմիտէն, վերջապէս, առաջարկում էր մեծացնել համայնքների հետ աշխատանքների ծաւալը: Ըստ այդ տեղեկանքի.-

1. Սփիւռքահայութեան թիւը հիմնական գաղթավայրերում 1.8 մլն. է, իսկ փոքրերի հետ՝ 2 մլն.
2. Կոմիտէի կապերի թիւը հասել է 6 հազարի, որից կազմակերպութիւններ՝ 1000, որից էլ ՀԲԸՄ մասնաճիւղեր՝ 184.
3. Սիրիայում կարեւոր համայնքային կազմակերպութիւններից են Հալէպի Ազգային Մշակութային Միութիւնը, որի կողմից 1967ին բանուորական 5-հոգանոց պատուիրակութիւն էր գործուղուել հայրենիք[53], Թեքէեան «Մաարի» Մշակութային Միութիւնը եւ «առաջադիմական» ՀՄՄՆ ու ՀԵԸը՝ Հալէպում ու Դամասկոսում[54]:

Այս ցանկում, զարմանալիօրէն, բացակայում են «առաջադիմական» համարուող ՌԱԿի եւ ՍԴՀԿի անունները: Ընդհանուր առմամբ, կարծես ակնյայտ է դառնում Կոմիտէի «ընտրութիւնը»՝ կապերի պահպանումը գլխաւորապէս կրթամշակութային կազմակերպութիւնների հետ:

Տեղեկանքում յստակօրէն նշուած են Կոմիտէի գործունէութեան հիմնական ուղղութիւնները.

1. Գրականութեան առաքում.
2. Դասագրքերի առաքում.
3. Թերթերի, պարբերականների առաքում.
4. Ցուցահանդէսների կազմակերպում.
5. Արուեստի խմբերի փոխայցերի կազմակերպում.
6. Մասնագիտական խմբերի հրաւիրում հայրենիք.
7. Սփիւռքի «առաջադիմական» գրողների գործերի հրատարակում.
8. Զբօսաշրջիկների հետ աշխատանքներ.
9. Բանուորական խմբերի այցելութիւնների կազմակերպում հայրենիք [ամէն տարի Մայիսի 1ին (աշխատաւորների օրը) եւ Նոյեմբերի 29ին (Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման օրը)].
10. Դասախօսների գործուղումներ.
11. ՀՍՍՀ ուսանելու եկածներին աջակցութիւն[55]:

Ըստ տեղեկանքի.-

1. 1976ին ՀՍՍՀում կար սփիւռքահայ 325 ուսանող.
2. ՀՍՍՀ բուհերն աւարտում էր տարեկան 70 ուսանող.
3. Սփիւռքահայերին տեղեր են յատկացուում ՀՍՍՀ բուհերի ասպիրանտուրաներում.
4. Ուսուցիչների վերապատրաստմանը Սփիւռքից տարեկան մասնակցում է 30 ուսուցիչ.
5. Քարոզչութեան նպատակով հայրենիք են հրաւիրւում արուեստագէտներ, գեղանկարիչներ, լուսանկարիչներ, մամուլի գործիչներ.
6. Կոմիտէն տարեկան ստանում է 2000 նամակ.
7. Կոմիտէի պաշտօնաթերթ *Սովետական Հայաստան* ամսագրին բաժանորդագրուել է 7335 սփիւռքահայ, իսկ *Հայրենիքի Ձայն* շաբաթաթերթին՝ 11,784 սփիւռքահայ (*Սովետական Հայաստան* օրաթերթի սփիւռքահայ բաժանորդների թիւը 54 էր).
8. «Առաջադիմական» թերթերին տպագրութեան նպատակով առաքուել է 350 յօդուած[56]:

Փաստօրէն, Կոմիտէի աշխատանքերի առաջին 10ամեակի արդիւնքները ցոյց են տալիս, որ դրանք դեռեւս հեռու էին անհրաժեշտ որակից ու խորութիւնից, աւելին, այնպիսի համայնքներում, ինչպիսին էր սիրիահայ համայնքը, որտեղ աշխուժ էին «ռէակցիոն» ուժերը, Կոմիտէի գործունէութիւնը բախւում էր դժուար յաղթահարելի խոչընդոտների: Ուստի՝ զարմանալի չէ, որ տեղեկանքի վերջում Կոմիտէն առաջարկում էր.-

1. Թոյլատրել տարբեր հարցերով կազմակերպել խորհրդակցութիւններ ու հաւաքներ.
2. Վերապատրաստուող ուսուցիչների տարեկան թիւը 30ից բարձրացնել 40ի.
3. *Սովետական Հայաստան* ամսագրում եւ *Հայրենիքի Ձայն* շաբաթաթերթում տպագրել օտարալեզու միջուկներ.
4. ՀՍՍՀ պիոնէրական ճամբարներում հանգստանալու նպատակով հրաւիրել տարեկան 100-130 սփիւռքահայ դպրոցականներ.
5. ՀՍՍՀ բուհերում աւելացնել սփիւռքահայ ուսանողներին յատկացուող տեղերը.
6. Համայնքներ գործուղել ուսուցիչների.
7. Ծրագրուած մասնագիտական-զբօսաշրջական խմբեր գործուղել համայնքներ[57]:

Կարելի է արձանագրել, որ Կոմիտէն կատարուող աշխատանքների ծաւալների ընդարձակման միջոցով նոր յաջողութիւններ արձանագրելու փորձ է կատարում, թէեւ նոյնիսկ կատարուած առաջարկների ընդունման արդիւնքում այդ աշխատանքների ծաւալները էականօրէն չէին ընդարձակուելու:

Պէտք է նշել, որ թէեւ Սփիւռքի հայ համայնքների հետ կապեր հաստատելիս Կոմիտէն յենւում էր համայնքների հասարակական-քաղաքական բաժանման վրայ («առաջադիմական» եւ «ռէակցիոն» հոսանքներ), սակայն աշխատանքներում հիմնականում բացակայում էր այդ բաղադրիչը եւ շեշտադրումը կատարւում էր միայն մշակութային բնոյթի միջոցառումների վրայ:

Կարեւորութիւն է ներկայացնում Կոմիտէի Արեւելեան Երկրների Բաժնի 1978ի աշխատանքների ծրագիրը, որը ցոյց է տալիս, որ վերեւում բերուած առաջարկները զգալի չափով իրենց տեղը գտել են այնտեղ: Ըստ ծրագրի՝ բաժնի հիմնական նպատակները հետեւեալներն էին.-

1. Բաժնի աշխատանքների աշխուժացում.
2. Գաղթօճախների հետ կապերի ամրապնդում.
3. Գաղթօճախներում հայրենիքի յաջողութիւնների հանրահռչակում.
4. Գաղթօճախների «առաջադիմական» շրջանակների դիրքերի ամրապնդմանը նպաստում[58]:

Իրականացուելիք միջոցառումների բաժնում, մասնաւորապէս, սիրիահայութեան ընդգրկումով նախատեսւում էին հետեւեալ աշխատանքները.-

1. Մայիսի 1ի տօնակատարութիւններին մասնակցելու համար Երեւան հրաւիրել 10 հոգանոց աշխատանքային պատուիրակութիւն Լիբանանից ու Սիրիայից.
2. ՀՍՍՀի գիտական ու մշակութային յաջողութիւնները հանրահռչակելու համար Երեւան հրաւիրել գիտութեան, մշակոյթի եւ արուեստի գործիչներ Սիրիայից եւ այլ երկրներից.

3. Սփիւռքահայ երիտասարդութեան շրջանում հայրենասիրական աշխատանքներ իրականացնելու եւ հայրենիքի ու Սիրիայի հայ երիտասարդութեանն իրար կապելու նպատակով Երեւան հրաւիրել երիտասարդական ու մարզական պատուիրակութիւններ Սիրիայից.
4. Առաջադիմական ու հայրենասիրական կազմակերպութիւնների եւ կուսակցութիւնների ղեկավարների հետ աշխատանքներ իրականացնելու համար Սիրիայից հայրենիք հրաւիրել առաջադիմական գործիչների, հայրենակցական միութիւնների ղեկավարների, գաղթօճախներում հեղինակութիւն ունեցող անհատների.
5. Մատաղ սերնդի հետ աշխատելու համար ՀՍՍՀ պիոնէրական ճամբարներում հիւրընկալել սփիւռքահայ դպրոցականների.
6. Մինչեւ 1978 Լուսաւորութեան Մինիստրութեան հետ նախապատրաստել սփիւռքահայ (մասնաւորապէս սիրիահայ) ուսուցիչների վերապատրաստման նպատակով Երեւան հրաւիրելու հարցը.
7. Նախապատրաստել 1978ին Սիրիա եւ մի շարք այլ երկրներ մեկնող յատուկ տուրիստական խումբ, որի անդամները հանդիպումներ ու ելոյթներ պէտք է ունենան Դամասկոսի եւ այլ քաղաքների համայնքներում.
8. Առաջադիմական ուժերի հրաւէրով Սիրիա եւ այլ երկրներ ուղարկել արուեստագէտների եւ մտաւորականների խմբեր[59]:

Կարելի է տեսնել, որ 1978ի աշխատանքային ծրագրում փորձ էր արւում կեանքի կոչել 1976ի տեղեկանքում կատարուած առաջարկութիւնները:

Կոմիտէն շուտով իրականացրեց մի յուժ կարեւոր ձեռնարկ, որը ծրագրուած էր վաղուց, սակայն հնարաւոր եղաւ կեանքի կոչել Կոմիտէի ստեղծումից միայն 15 տարի անց: 24-27 Նոյեմբեր 1980ին Կոմիտէի նախաձեռնութեամբ «Վերածնուած Հայրենիքը եւ Սփիւռքը, Պայքար Յանուն Խաղաղութեան եւ Առաջադիմութեան» նշանաբանով Երեւանում տեղի ունեցաւ սփիւռքահայ համայնքների ներկայացուցիչների առաջին համահայկական հաւաք-համաժողովը, որին մասնակցում էին 100ից աւելի ներկայացուցիչներ Սփիւռքի բոլոր համայնքներից, այդ թւում՝ Սիրիայից: Համաժողովին հրաւիրուել էին նաեւ ՀՍՍՀ տարբեր բնագաւառների գործիչներ[60]: Հիմնական նպատակը Հայրենիք-Սփիւռք կապերի սերտացումն էր ու համագործակցութեան առաւել արդիւնաւէտ միջոցների մշակումը:

Փաստօրէն, իվերջոյ, հնարաւոր եղաւ գումարել բնոյթով ու բովանդակութեամբ Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնների զարգացման համար յենքային նշանակութիւն ունեցող համայնքների ներկայացուցիչների հաւաքը:

Ճիշտ է, օրուայ պահանջով համաժողովի ներկայացուցիչները ստիպուած եղան հիացական-շնորհաւորական նամակ յղել ԽՍՀՄ ղեկավարութեանը, սակայն նոյնիսկ դա չստուերեց կարեւորութիւնը համաժո-

ղովին, որի ընդունած փաստաթղթերը (յայտարարութիւն եւն.) Կոմիտէն իր 1980ի հաշուետուութեան մէջ համարում էր «պատմական»[61]:

Համաժողովին, որը Կոմիտէն անուանում էր նաեւ «Հայրենիք-Սփիւռք Համաժողով», Սիրիայից ներկայ էին հետեւեալ անձինք.

1. Ժորժ Մեծօղլանեան, զբօսաշրջական ընկերութեան տնօրէն, կոմունիստ.
2. Խաչիկ Թուխմանեան, ՍԴՀԿ Սիրիայի կառոյցի ղեկավար.
3. Լիւսի Սիլահեան, գրող, հասարակական գործիչ.
4. Ալեքսանդր Սիլահեան, բժիշկ.
5. Յովհաննէս Ճիւանեան, Սիրիայի Կոմունիստական Կուսակցութեան ղեկավարներից.
6. Նուբար Սօնա, Յովհաննէս Ճիւանեանի կինը.
7. Թորոս Թորանեան, բժիշկ, հասարակական գործիչ.
8. Ռոբերտ Ճեպէճեան, բժիշկ, հասարակական գործիչ.
9. Լիւսի Խապայեան, Ռոբերտ Ճեպէճեանի կինը.
10. Մովսէս Հալլաճեան, ճարտարապետ, հասարակական գործիչ.
11. Լեւոն Եագուպեան, ՀԲԸՄի ղեկավարներից.
12. Միշէլ Տիմիճեան, բժիշկ, հասարակական գործիչ.
13. Լիլի Յակոբեան, Միշէլ Տիմիճեանի կինը.
14. Ալիշան Գարասարգիսեան, ՌԱԿի ղեկավարներից[62]:

Սիրիահայերից համաժողովին ելոյթով հանդէս եկաւ Թորոս Թորանեանը[63]:

Պահպանուել են Կոմիտէի նախագահի տեղեկանքները 1976-80ի աշխատանքների արդիւնքների մասին, որտեղ հիմնականում շեշտուած են գրականութեան (դասագրքեր եւն.) եւ թերթերի առաքման աշխատանքները[64]:

1980ին Կոմիտէի կազմում, երիտասարդների հետ աշխատանքները խթանելու նպատակով, ստեղծուեց «Երիտասարդութեան Հարցերի Բաժին»[65]:

Այդ տարի Մերձաւոր Արեւելք եւ մասնաւորապէս Սիրիա է մեկնել Կոմիտէի նախագահ Համազասպեանը: Նա այնտեղ հանդիպել է առաջադիմական կազմակերպութիւնների ղեկավարների եւ թերթերի տնօրէնների հետ[66]:

ԿՈՄԻՏԷԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 1981-85Ի ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԸ ԵՒ ՍԻՐԻԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ

Կոմիտէի 1981-85ի աշխատանքների վերաբերեալ ընդհանուր կարծիք կազմելու համար մեծ կարեւորութիւն է ներկայացնում Կոմիտէի՝ այդ տարիների գործունէութեան հիմնական ուղղութիւնների մասին տեղեկանքը: Ըստ այդ տեղեկանքի.-

1. Կոմիտէն Սփիւռքում ունի շուրջ 10 հազար հասցէատէր, որից 8990ը՝ անհատ, իսկ 1010ը՝ կազմակերպութիւն.
2. Նշուած 1010 կազմակերպութիւններից, որոնք գործում են 35 երկրներում, 256ը մշակութային են, 49ը՝ երիտասարդական, 246ը՝ դպրոցներ, 30ը՝ հայագիտական կենտրոններ եւ գրադարաններ, 100ը՝ խմբագրութիւն, 31ը՝ երգչախումբ, 21ը՝ պարի խումբ, 38ը՝ հայրենակցական միութիւն, 103ը՝ եկեղեցական կազմակերպութիւն.
3. Սփիւռքահայ համայնքներ են առաքւում թերթեր եւ ամսագրեր, որոնցից՝ *Հայրենիքի Ձայն*՝ 11 հազար եւ *Սովեպական Հայաստան*՝ 7500 (այսինքն՝ 1976ի համեմատ՝ գրեթէ նոյնքան).
4. Համայնքներից ընդունուել են 250 պատուիրակութիւն, 865 դպրոցական, եւ 215 մտաւորական.
5. Աշխուժացել են երիտասարդութեան հետ աշխատանքները, յատկապէս, Կոմիտէի համապատասխան բաժնի յառաջացումից յետոյ.
6. ՀՍՍՀում սովորում է սփիւռքահայ 700 ուսանող.
7. 1981ին Երեւանում կազմակերպուել է արտասահմանի լրատուամիջոցների խմբագիրների հաւաք.
8. 1983ին Երեւանում անցկացուել է սփիւռքահայ գրողների ու մամուլի գործիչների հաւաք.
9. 1984ին Երեւանում տեղի է ունեցել սփիւռքահայ մշակութային միութիւնների ղեկավարների հաւաք.
10. 1985ին Երեւանում գումարուել է սփիւռքահայ ռադիօ-հեռուստաժամերի ներկայացուցիչների եւ մամուլի խմբագիրների խորհրդակցութիւն[67]:

Յայտնի է, որ այս բոլոր միջոցառումներին էլ լայն մասնակցութիւն են ունեցել սիրիահայ համայնքի ներկայացուցիչները:

Տեղեկանքում Կոմիտէն հասցէատէրերի ուշադրութիւնն էր բեւեռում մի շարք խնդիրների վրայ: Մասնաւորապէս.-

1. Քիչ են արտասահմանեան ուղեւորութիւնները.
2. Գործուղումների յետաձգումների հետեւանքով առաջացող փոփոխութիւններից նիւթապէս տուժում են սփիւռքահայ առաջադիմական կազմակերպութիւնները.
3. Քանի որ Կոմիտէի ներկայացուցիչների տարեկան արտասահմանեան կապերի ծրագիրը հաստատում էր ԽՍՀՄ Արտասահմանի Հայրենակիցների Հետ Մշակութային Կապերի Սովետական Ընկերութիւնը՝ «Ռոդինա»ն, Կոմիտէն դժգոհում էր որ «Ռոդինա»ի զբօսաշրջական խմբերը կազմելիս ոչ-միշտ են հաշուի առնւում Կոմիտէի ծրագրերը, իսկ նշուած զբօսաշրջական խմբերի ղեկավարներն էլ երբեմն անտեսում են Կոմիտէի ներկայացուցիչներին.

4. Աշխատանքների լաւ կազմակերպման համար անհրաժեշտ էր, որ Կոմիտէն ներկայացուցիչներ ունենայ ԱՄՆի, Արգենտինայի եւ Ֆրանսիայի ԽՍՀՄ դեսպանատներում.
5. Պէտք է վերջապէս լուծել վաղուց իվեր պահանջուած ՀՍՍՀ հայերէն քարտէզի հրատարակման հարցը[68]:

Համահայկական բնագաւառային հաւաքները, որոնք 1981-85 շրջանում կազմում էին Կոմիտէի գործունէութեան առանցքը, նպատակ էին հետապնդում լրացնելու այն բացը, որն առաջանում էր Կոմիտէի ներկայացուցիչների՝ սփիւռքահայ համայնքներում աշխատելու սահմանափակ հնարաւորութիւնների հետեւանքով:

Ուշագրաւ է այն, որ սիրիահայ համայնքի առումով Կոմիտէի ծրագրերը բաւականին սեղմ էին: Մասնաւորապէս, Կոմիտէի՝ 1982-83ի միջազգային կապերի ծրագրով նախատեսւում էր.-

1. Սիրիահայ գաղթօճախից ընդունել պատուիրակութիւն Երեւանում (3 մարդ՝ 10 օրով՝ երկու անգամ).
2. Գաղթօճախի ներկայացուցիչներ հրաւիրել Երեւան (4 մարդ՝ 10 օրով).
3. Սիրիա ուղարկել հայոց լեզուի ուսուցիչ՝ մէկ տարով դպրոցում դասաւանդելու համար[69]:

Այս առումով հետաքրքրական է Կոմիտէի Արեւելեան Երկրների Բաժնի 1984ի հաշուետուութիւնը, որտեղ նշուած են սիրիահայ համայնքի հետ հետեւեալ աշխատանքները.-

1. Մայիսի 1ի առիթով Սիրիայից ժամանել է 3 հոգանոց պատուիրակութիւն,
2. Բաժինը սիրիահայ համայնքում ունի 1000 հասցէ,
3. Հայրենիք է ժամանել Սիրիայի Գրական Շրջանակի զբօսաշրջական խումբը[70]:

Այստեղ կարեւոր է նաեւ ներկայացնելը, թէ ինչ պահանջներ էին դրւում Սփիւռք ուղարկուող խմբերի առաջ: Պահպանուել է նաեւ 1985 Դեկտեմբերին Սիրիա ուղարկուած արուեստագէտների խմբին տրուած յանձնարարականը, որը յուժ կարեւոր է՝ նմանատիպ ուղեւորութիւնների ժամանակ խմբերի իրաւունքներին ու պարտականութիւններին ծանօթանալու համար: Յանձնարարականի մէջ խնդիր էր դրուած.-

1. Հանդիպել առաջադիմական կազմակերպութիւնների, դպրոցների, թատերախմբերի, մարզական ու երիտասարդական միութիւնների հետ.
2. Հանդիպումները պէտք է առաջին հերթին կրեն համերգերի ու ելոյթների բնոյթ եւ միայն անհրաժեշտութեան պարագայում՝ զրոյցների.
3. Կրօնական կազմակերպութիւնների հովանու ներքոյ գտնուող դպրոցներ եւ կազմակերպութիւններ գնալիս նախապատուութիւնը տալ հայ առաքելական եկեղեցուն.

4. Ոչ-առաջադիմական կազմակերպութիւնների հետ պաշտօնական հանդիպումներ չունենալ, բայց նաեւ չխոչընդոտել միջոցառումներին նրանց ներկայութեանը.
5. Պաշտօնական յայտարարութիւններ չանել.
6. Խոստումներ չտալ[71]:

Փաստօրէն, ՀՍՍՀից ուղարկուող նոյնիսկ արուեստագէտների խմբերն ունէին սփիւռքահայ համայնքների հետ աշխատելու եւ պարզ շփումների սահմանափակ իրաւունքներ ու հնարաւորութիւններ: Այդ իրողութիւնը, հասկանալի է, այնքան էլ չէր նպաստում Կոմիտէի աշխատանքների արդիւնաւէտութեան բարձրացմանը:

1985ին թոշակի անցնելով պաշտօնից հրաժարական տուեց Կոմիտէի երկարամեայ ղեկավար Վարդգէս Համազասպեանը: Կոմիտէի յաջորդ նախագահ նշանակուեց Կարլէն Դալլաքեանը[72]: Կոմիտէի աշխատանքներում սկսուեց նոր փուլ:

ՅԵՏ ԳՐՈՒԹԵԱՆ

1985ին եւ յետագայ տարիներին ԽՍՀՄը թեւակոխել էր նոր՝ «վերակառուցման» փուլ եւ ակնյայտ էր «ձնհալ»ը: Սակայն դատելով մինչեւ 1988 պահպանուած փաստաթղթերից՝ Կոմիտէն սփիւռքահայ համայնքներում շարունակում էր գործել՝ հիմնուելով նախորդ 20ամեակի սկզբունքների վրայ՝ համայնքների հասարակական-քաղաքական հոսանքները բաժանելով «առաջադիմական»ների ու «յետադիմական»ների: Օրինակ՝ 1987ին նախատեսելով կազմակերպել առաջադիմական ՍԴՀԿի 100ամեակի նշումը՝ Կոմիտէի ներկայացուցիչները գտնում էին, որ դա կը նպաստի Սփիւռքում առաջադիմական ուժերի յաջողութիւններին[73]: Պահպանուել է Կոմիտէի 1986-90ի միջոցառումների ծրագիրը, որտեղ նախատեսուած էին գործունէութեան նոյն ուղղութիւնները եւ գրեթէ նոյն միջոցառումները՝ ինչ նախկինում (հաւաք-համաժողովների կազմակերպում, գրականութեան առաքում եւն.)[74]:

Դրան նպաստում էին որոշ խիստ էական գործօններ: 1988ի երկրաշարժի առնչութեամբ՝ Կոմիտէն կազմեց 1989ի գործողութիւնների խիստ սուղ ծրագիր՝ հիմնական ուշադրութիւնը բեւեռելով երկրաշարժից տուժածների համար սփիւռքահայերի օգնութիւնը կազմակերպելու վրայ[75]: Ակնյայտ է, որ, չնայած անցումային շրջանի դժուարութիւններին, Կոմիտէն փորձեր էր կատարում անել առաւելագոյնը՝ իվերջոյ կենտրոնանալով հայրենիքի աւերուած բնակավայրերի վերականգնման եւ աղէտեալ բնակչութեան համար Սփիւռքի օգնութեան ապահովման աշխատանքների վրայ:

Իվերջոյ, պէտք է նշել, որ Կոմիտէի առաջին 20ամեակի գործունէութեան մէջ սիրիահայութեան հետ աշխատանքները թերեւս ամէնաարդիւնաւէտներից էին, քանի որ այդ աշխատանքներում սիրիահայութեան մասնակցութիւնը միշտ եղել է առաւել ազդեցիկներից մէկը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Հայաստանի Ազգային Արխիւ (ՀԱԱ), ֆոնդ 875, ցուցակ 1, գործ 2, թուղթ 1-2:
[2] Նոյն, ց. 1, գ. 11, թ. 1-18:
[3] Նոյն, ց. 2, գ. 43, թ. 1:
[4] Նոյն, ց. 1, գ. 2, թ. 3: Համազասպեանը Կոմիտէի նախագահ է եղել 1964-85ին: 1951-64՝ եղել է Խաչատուր Աբովեանի Անուան Պետական Մանկավարժականի ռեկտոր: Մտաւորական, միջնադարագէտ, կուսակցական ու կրթական գործիչ: 1980ին հրատարակուել է նրա *Սովետական Հայաստանը եւ Սփիւռքը* գրքոյկը:
[5] Նոյն, ց. 16, գ. 1, թ. 1:
[6] Նոյն, թ. 1-3:
[7] Վարդգէս Համազասպեան, *Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը եւ Հայաստանը*, Երեւան, 2001, էջ 279-280:
[8] ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 6:
[9] Արմէնուհի Ստեփանեան, *XX Դարի Հայրենադարձութիւնը Հայոց Ինքնութեան Համակարգում*, Երեւան, ՀՀԳԱԱ Գիտութիւն Հրատ., 2010, էջ 277:
[10] ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 6:
[11] ԱՕԿՍը ստեղծուել է 1944ին: Նրա հիմնական նպատակն արտասահմանի հայկական «առաջադիմական» ընկերութիւնների ու կազմակերպութիւնների հետ կայուն եւ տեւական մշակութային կապի հաստատումն էր (նոյն, ֆ. 709, ց. 9, գ. 165, թ. 2-3):
[12] Նոյն, ֆ. 875, ց. 2, գ. 2, թ. 5:
[13] Նոյն, գ. 116:
[14] Նոյն:
[15] Նոյն:
[16] Նոյն:
[17] Նոյն:
[18] Նոյն, գ. 118:
[19] Նոյն, գ. 203:
[20] Նոյն:
[21] Նոյն, թ. 36-54: Կոմիտէի աշխատանքներն ընդհանուր առմամբ մանրամասնօրէն ներկայացրել է Յովիկ Մելիքսէթեանը (Յովիկ Մելիքսէթեան, *Հայրենիք-Սփիւռք Առնչութիւնները եւ Հայրենադարձութիւնը (1920-1980-ական թթ.)*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1985, էջ 366-446:
[22] ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 203:
[23] Նոյն, գ. 206, թ. 41:
[24] Նոյն, թ. 42-45:
[25] Նոյն, թ. 60:
[26] Նոյն, գ. 586, թ. 2:
[27] Նոյն, գ. 294, թ. 23:
[28] Նոյն, թ. 37:
[29] Նոյն, գ. 592, թ.12:
[30] Նոյն, ց. 4, գ. 17, թ. 23:
[31] Նոյն:
[32] Նոյն:

[33] Նոյն:
[34] Նոյն, g. 6, գ. 1, թ. 1-5:
[35] «Բոլոր Հայերի Հայրենիքը», *Սովետական Հայաստան Ամսագիր*, 1980, N 12, էջ 22-23:
[36] Ս. Գասպարեան, «Սփիւռքահայ Մշակութային Եւ Հայրենակցական Միութիւնները Արդի Շրջանում», *Պատմա-Բանասիրական Հանդէս*, 1970, N 3, էջ 274-83:
[37] ՀԱԱ, ֆ. 875, g. 4, գ. 34:
[38] Ստեփանեան, էջ 278, 358:
[39] Նոյն, էջ 357:
[40] ՀԱԱ, ֆ. 875, g. 4, գ. 45:
[41] «Առաջինը, Երեւանեանը», *Սովետական Հայաստան Ամսագիր*, 1971, N 4, էջ 22-23. նաեւ՝ նոյն, Խմբագրական, «Համագործակցութիւնը Յաջողութեան Գրաւականն է», N 5, էջ 4:
[42] ՀԱԱ, ֆ. 875, g. 4, գ. 74:
[43] Նոյն, g. 5, գ. 320:
[44] Տե՛ս՝ վերոնշեալ բոլոր գործերը:
[45] Նոյն, g. 6, գ. 570:
[46] Նոյն:
[47] Նոյն, g. 8, գ. 129, թ. 68:
[48] Նոյն, թ. 67:
[49] Նոյն, թ. 65-66:
[50] Նոյն, g. 6, գ. 570:
[51] Նոյն, g. 6, գ. 19, թ. 35:
[52] Նոյն, գ. 33, թ. 16-19:
[53] Նոյն, g. 4, գ. 9, թ. 18:
[54] Նոյն, g. 6, գ. 34:
[55] Նոյն:
[56] Նոյն:
[57] Նոյն:
[58] Նոյն, g. 8, գ. 157, թ. 1:
[59] Նոյն, թ. 1-3:
[60] Նոյն, գ. 9, g. 40, թ. 1-2. նաեւ՝ «Բոլոր Հայերի Հայրենիքը», էջ 7-34:
[61] ՀԱԱ, ֆ. 875, g. 9, գ. 40, թ. 4-5:
[62] Նոյն, գ. 38, թ. 77:
[63] Նոյն, թ. 82:
[64] Նոյն, գ. 41, թ. 1-4:
[65] Նոյն, գ. 40, թ. 11:
[66] Նոյն, թ. 15:
[67] Նոյն, g. 14, գ. 8, թ. 1-5. նաեւ՝ g. 16, գ. 11:
[68] Նոյն, g. 14, գ. 8, թ. 8-9:
[69] Նոյն, գ. 21, թ. 7:
[70] Նոյն, g. 16, գ. 6, թ. 2-4:
[71] Նոյն, գ. 18, թ. 9:

[72] Կարլէն Դալլաքեանը գիտութեան եւ խորհրդահայ կուսակցական ու պետական գործիչ էր. 1963-70՝ ՀԽՍՀ մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու Գործերի Խորհրդի նախագահ, 1976-85՝ Հայաստանի Կոմկուսի Կենտրոնական Կոմիտէի քարտուղար եւ Բիւրոյի անդամ, 1985-91՝ Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէի նախագահ: 1985ից եղել է ՀՀ Գիտութիւնների Ակադեմիայի գիտաշխատող եւ հանդէս եկել գիտական հրապարակումներով:

[73] Նոյն, գ. 17, թ. 4:

[74] Նոյն, թ. 1-7:

[75] Նոյն, գ. 29:

The Committee of Cultural Relations with Diaspora Armenians and the Syrian Armenians

(Summary)

Arman Yeghiazaryan
armyegh@yahoo.com

From its inception in 1964, Soviet Armenia's Committee on Cultural Relations with the Diaspora Armenians established a strong relationship with the Syrian Armenian community. Special attention was paid to the Middle East Armenian communities as these were deemed very important due to their number and organizational network.

Through archival materials, the paper analyses various aspects of the relations of the Committee with the Armenian community of Syria. Prior to the establishment of these relations thorough research and a study of the Syrian Armenian community was conducted to assess who's who in the community. Eventually two types of relations were established: personal and organizational. The paper underlines, however, that these relations were partial as they excluded nearly all relations with individuals and organizations that were not considered "progressive."

The Committee of Cultural Relations with Diaspora Armenians and the Syrian Armenians

(Summary)

Arman Yeghiazaryan
armyegh@yahoo.com

From its inception in 1964, Soviet Armenia's Committee on Cultural Relations with the Diaspora Armenians established a strong relationship with the Syrian Armenian community. Special attention was paid to the Middle East Armenian communities as these were deemed very important due to their number and organizational network.

Through archival materials, the paper analyses various aspects of the relations of the Committee with the Armenian community of Syria. Prior to the establishment of these relations thorough research and a study of the Syrian Armenian community was conducted to assess who's who in the community. Eventually two types of relations were established: personal and organizational. The paper underlines, however, that these relations were partial as they excluded nearly all relations with individuals and organizations that were not considered "progressive."